

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 հունվարի 2008 թվականի N 116-Ն

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԹՎԱՅԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ
ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԴՐԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ
ԱՌԱՋԱԴՐՎՈՂ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 4-ի «Էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրման կենտրոնների հավատարմագրման կարգը հաստատելու մասին» N 1596-Ն որոշման հավելվածի 3-րդ և 4-րդ կետերի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է*.

1. Հաստատել էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրման կենտրոնների հավատարմագրման համար դրանց կողմից մատուցվող ծառայություններին առաջադրվող տեխնիկական չափանիշները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2008 թվականի սեպտեմբերի 1-ից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Ս. Սարգսյան

**ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԹՎԱՅԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ
ՀԱՎԱՍՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԴՐԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ
ԱՌԱՋԱԴՐՎՈՂ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ**

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրման կենտրոնների (այսուհետ՝ հավաստագրման կենտրոններ) հավատարմագրման համար դրանց կողմից տրամադրվող էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրերը և էլեկտրոնային թվային ստորագրությունների հետ կապված այլ մատուցվող ծառայություններ պետք է համապատասխանեն սույն փաստաթղթով սահմանված չափանիշներին:

**II. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԹՎԱՅԻՆ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ՁԵՎԱԶՍՓԸ ԵՎ
ԱԼԳՈՐԻԹՄԸ**

2. Հավատարմագրվող հավաստագրման կենտրոնների կողմից տրամադրվող էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրերը պետք է համապատասխանեն հետևյալ ալգորիթմների ստանդարտներից որևէ մեկին՝

1) առնվազն 1024 բիտ երկարությամբ բանալի ունեցող, դիսկրետ լոգարիթմների վրա հիմնված ալգորիթմների.

2) առնվազն 512 բիտ երկարությամբ բանալի ունեցող, էլիպտիկ կորերի վրա հիմնված ալգորիթմների:

3. Հավատարմագրվող հավաստագրման կենտրոնների կողմից տրամադրվող էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրի ձևաչափը պետք է համապատասխանի Հեռահաղորդակցության միջազգային կազմակերպության կողմից մշակված հանրային (բաց) կրիպտոգրաֆիկ բանալիների (ստուգման տվյալների) տարածման և նույնականացման չափանիշներին:

III. ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԵՎ ԱՊԱՐԱՏԱԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

4. Հավատարմագրվող հավաստագրման կենտրոնների կողմից էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագրերի տնօրինման համակարգերը, այդ հավաստագրերին համապատասխանող էլեկտրոնային թվային ստորագրությունների ստեղծման ապարատային և (կամ) ծրագրային միջոցներն ու ծառայությունների մատուցման գործընթացները պետք է համապատասխանեն Ստանդարտացման միջազգային կազմակերպության կողմից ընդունված տեղեկատվության անվտանգության կառավարման

և տեղեկատվական համակարգերի անվտանգության հետևյալ սկզբունքներին՝
անհատական տվյալների գաղտնիության և այլ տեղեկատվության պատշաճ ֆիզիկական ու
էլեկտրոնային պաշտպանվածության ապահովում, անվտանգության ռիսկերի
արդյունավետ կառավարում, անվտանգության կանոնների ապահովումը երաշխավորող
համապատասխան անձնակազմի և ապարատաձրագրային միջոցների առկայություն,
տեղեկատվության անվտանգության կանոնների ապահովվածության վերաբերյալ
հաճախորդների և այլ շահագրգիռ անձանց իրազեկվածության ապահովում:

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Մ. Թովուզյան